ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. սեպտեմբերի 9 N 86 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ << ՕՇԱԿԱՆԻ Փ. ԲԱԲԿԵՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >>, <<ՕՇԱԿԱՆԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>, <<ԱՐՏԱՇԱՎԱՆԻ Մ. ԱՍԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, << ԿԱՐԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> , << ԾԱՂԿԱՇԵՆԻ Կ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, << ՀԱՐԹԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ- ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ– 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2013 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց>>, <<Օշականի Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոց>>, <<Արտաշավանի Մ. Ասատրյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Կարինի միջնակարգ դպրոց>>, <<Ծաղկաշենի Կ. Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Հարթավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2010, 2011 և 2012 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, բաժնի պետ՝ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ՝ Արիս Թովմասյանի և Սիրան Ասատրյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ ՊՈԱԿ-ների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 21 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2013 թվականի սեպտեմբերի 9-ից ավարտել 2013 թվականի հոկտեմբերի 8-ին:

Ա. ՄԱՐՏԱԿՅԱՆ